

նեցաւ (էջ 97): Մովսէս Վ. ասոր ընդհանրական խոստովանանք եղաւ, Ս. Թոշակ եւ Վերջին Օծում առնելով՝ Զատկին օրերը հոգին Աստուծոյ աւանդեց: Այս գոյժը բոլոր Գաղատացիները սասանեցուց. ամէնքն առանց զանազանութեան վանք դիմեցին, եւ աջը համբուրեցին անշնչացեալ առաջնորդին, զոր եպիսկոպոսական զգեստներով ակօղող բազմեցուցած էին: Այնուհետեւ մեծաւ հանդիսութեամբ թաղեցին զինք՝ վանքին ներքին դրան քով, եկեղեցւոյ դրան մօտ, դրսի Ս. Աստուածածնի խորանին առջեւը, եւ վրան մարմարեայ մեծ կափարիչ մը դրին, տապանագրով: Մինչեւ ցայսօր իւր գերեզմանն ուխտատեղի է ժողովրդեան եւ մեծ հրաշքներ կը պատմուին:

“Մովսէս Վ. “Մեծ Մովսէս” կոչուեցաւ, վասն զի ուսեալ մէկն էր եւ սքանչելի կը քարոզէր: Շատ գեղեցիկ ձեռագիր ունէր. ընդօրինակած էր գեղեցկագիր՝ Մեծին Ալպերտի Աստուածաբանութիւնը եւ Սարգիս Շնորհալոյ Մեկնութիւնը: Շատ աշակերտներ ունեցաւ, ոմանք իրեն հաւատքին հետեւող: Առաջնորդութեան երկրորդ տարին վանքը նորոգեց, Ս. Խաչ եւ Ս. Քառասունք եկեղեցիներն օծեց: Վանքին եկեղեցական թանկագին սպասներ շնորհեց, եւ ուրիշ մեծամեծ գործեր կատարեց:”

Այս նշանաւոր անձին տապանագրէն կ'իմանանք, որ Մովսէս աշակերտ էր Գաղատիոյ Առաջնորդ Զէյթունցի Ստեփաննոս Եպիսկոպոսին (1670—1694, †-1700, 29 Ապրիլի. Տա-